

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԻՆՊՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 1997թ. սեպտեմբերի 2-ին «Էֆես» ԱՓԲԸ անվանմամբ և հանդիսանում է փակ բաժնետիրական ապահովագրական ընկերություն գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 02.09.1997թ. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N0014 արտոնագրային համարով: 2003թ. դեկտեմբերին Ընկերությունը վերանվանվել է «ԻՆՊՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ: 28.03.2008թ. Ընկերությունը վերալիցենզավորվել է N0005 արտոնագրային համարով:

Ընկերությունը զբաղվում է ընդհանուր ապահովագրական գործունեությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում: Ընկերության կողմից կնքվող ապահովագրական պայմանագրերի հիմնական տեսակներն են՝ դժբախտ պատահարներից, առողջության, ցամաքային տրանսպորտի, փոխադրվող գույքի, հրդեհից և բնական աղետներից, ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, ֆինանսական վնասների, ընդհանուր պատասխանատվության, արտասահման մեկնողներին աջակցության ապահովագրությունը: Բացի այդ Ընկերությունը իրականացնում է օդանավերի և ջրային փոխադրամիջոցների, ինչպես նաև դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն: 2010թ.-ից Ընկերությունը հանդիսանում է Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող բյուրոյի անդամ և 2010թ. հոկտեմբերից կնքում է ԱՊՊԱ պայմանագրեր:

Ընկերության գլխավոր գրասենյակը և 3 մասնաճյուղերը գտնվում են Երևանում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 51,53 տարածք 47,48,50:

2. Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

Դեռևս առկա են անորոշություններ ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի առումով, ինչը կարող է հանգեցնել արտերկրից ոչ առևտրային դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացմանը: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա: Հետևաբար, Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ճշգրտվել դրանց հնարավոր ազդեցությամբ:

3. Հաշվետվությունների պատրաստման հիմքերը

3.1. Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՍԿ):

3.2. Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով բացառությամբ շինությունների, որոնք ներկայացվում են վերագնահատված գումարով:

3.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4. Վերադասակարգում և վերաներկայացում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

3.5 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար համապատասխան և 2013թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանի համար կիրառելի նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի («ՀՀՄՍ») և ՀՀՄՍ-ի Հաշվետվությունների Սեկնաբանման Հանձնաժողովի («ՀՄՀ») կողմից:

Ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք ընդունվել են Ընկերության կողմից

ՖՀՄՍ 13, Իրական արժեքի չափում

ՖՀՄՍ 13-ը հստակեցնում է իրական արժեքի սահմանումները և ապահովում է համապատասխան ուղեցույց և մանրամասն բացահայտումներ իրական արժեքի չափումների վերաբերյալ: Ստանդարտը չի առանձնացնում, թե որ միավորները պետք է հաշվառվեն իրական արժեքով: ՖՀՄՍ 13-ի շրջանակներն ընդարձակ են, և այն կիրառելի է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական այն հոդվածների համար, որոնց համար այլ ՖՀՄՍ-ները պահանջում կամ թույլ են տալիս իրական արժեքի չափումներ և իրական արժեքի չափումների վերաբերյալ բացահայտումների կատարում, բացառությամբ որոշ հանգամանքների:

Ստանդարտի կիրառման առաջին տարում պարտադիր չէ բացահայտումներին ներկայացվող պահանջները կիրառել համեմատական տեղեկատվության նկատմամբ:

ՖՀՄՍ 13-ը առաջին անգամ կիրառել է ընթացիկ տարում: Տես՝ ծանոթագրություն 34.2:

ՀՀՄՍ 1, Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում (Փոփոխություն)

ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները պահանջում են կազմակերպությանը այլ համապարփակ եկամուտներում ներկայացված տարրերը խմբավորել այնպիսի խմբերի, որոնք մնացած ՀՀՄՍ-ների համաձայն. ա) հետագայում չեն վերադասակարգվելու շահույթի կամ վնասի և բ) հետագայում վերադասակարգվելու են շահույթի կամ վնասի, երբ առաջանան որոշակի պայմաններ: Ընկերությունը ընդունել է այս փոփոխությունը, որը փոխել է այլ համապարփակ եկամուտների տարրերի ընթացիկ ներկայացումը, սակայն չի ազդել դրանց չափման և ճանաչման վրա:

ՖՀՄՍ 7, (Փոփոխություն) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Փոփոխությունը հավելում է ՖՀՄՍ 7-ի որակական և քանակական բացահայտումներ կապված ճանաչված ֆինանսական գործիքների զուտ և համախառն գումարների հետ, որոնք՝

- ա) հաշվանցվել են ֆինանսական վիճակի հաշվետվության մեջ,
- բ) ենթակա են կատարման հիմնական հաշվանցման պայմանավորվածության կամ նմանատիպ համաձայնագրերի ներքո, եթե նույնիսկ հաշվանցված չեն ֆինանսական վիճակի հաշվետվության մեջ:

ՖՀՄՍ-ն կիրառվել է առաջին անգամ ընթացիկ տարում: Տես՝ ծանոթագրություն 35:

Տարեկան բարեփոխումներ 2009-2011թթ.

2009-2011թթ-ի բարեփոխումները ուժի մեջ են մտել 2013թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, թեև հնարավոր էր նաև դրանց վաղ կիրառումը:

Ստորև ներկայացված է փոփոխությունների հակիրճ նկարագրությունը, որոնք կիրառելի չեն Ընկերության համար:

Փոխառության ծախսումներ

Փոփոխությունն ուղղված է այնպիսի իրավիճակին, երբ Ընկերությունը որոշում է կիրառել ՖՀՄՍ 1-ի ազատումը *ՀՀՄՍ 23-ի «Փոխառության ծախսումներ»* պահանջներից, պարզաբանելով որ.

- գ փոխառության ծախսումները, որոնք կապիտալիզացվել են նախքան անցման ամսաթիվը, համաձայն նախորդ համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների (GAAP-ի) պետք է տարվեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, և
- գ անցման ամսաթվից հետո կատարված փոխառության ծախսումները, որոնք վերաբերվում են անցման ամսաթվին կառուցման փուլում գտնվող որակավորվող ակտիվներին պետք է հաշվարկվեն համապատասխան ՀՀՄՍ 23-ի,
- գ երբ առաջին անգամ որդեգրողը որոշում է կիրառել ՀՀՄՍ 23-ի պահանջները անցման ամսաթվից վաղ ամսաթվով, փոխառության ծախսումները պետք է հաշվառվեն ՀՀՄՍ 23-ի համաձայն, նշված վաղ ամսաթվին կամ դրանից հետո:

ՀՀՄՍ 1, Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Փոփոխությունը տալիս է պարզաբանում համեմատական տեղեկատվության պահանջների վերաբերյալ, երբ կազմակերպությունը տրամադրում է ֆինանսական վիճակի մասին երրորդ հաշվետվությունը ելնելով ՀՀՄՍ 8-ի պահանջներից, կամ ըստ իր կամքի:

Հետևյալ խնդիրներն ուղղված են ֆինանսական վիճակի վերաբերյալ հաշվետվությանը.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական մնացորդների համար համեմատական տեղեկատվությունը պահանջվում է, երբ կազմակերպությունը փոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, կամ կատարում է հետընթաց վերահաշվարկներ կամ վերադասակարգումներ, համապատասխան ՀՀՄՍ 8-ի, և

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական մնացորդների համապատասխան ամսաթիվը հանդիսանում է նախորդ ժամանակաշրջանի սկիզբը: Այլևս չկա պահանջ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական մնացորդներին վերաբերվող ծանոթագրությունները ներկայացնելու վերաբերյալ:

Փոփոխությունը նաև հստակեցնում է խնդիրներ նվազագույն պահանջներից դուրս համեմատական տեղեկատվության վերաբերյալ, մասնավորապես

- պարզաբանում է թե արդյոք կազմակերպությունից պետք է պահանջել ներկայացնել ամբողջական ֆինանսական հաշվետվության փաթեթը, երբ այն տրամադրում է նվազագույն համեմատական տեղեկատվության պահանջներից դուրս ֆինանսական հաշվետվություններ (օրինակ՝ հավելյալ համեմատական տեղեկատվություն),

- բացատրում է, որ ֆինանսական հաշվետվության հավելյալ տեղեկատվությունը պարտադիր չէ ներկայացնել ամբողջական ֆինանսական հաշվետվության փաթեթի ձևով նվազագույն պահանջներից դուրս ժամանակաշրջանների համար: Ներկայացված յուրաքանչյուր հավելյալ տեղեկատվություն այնուամենայնիվ պետք է ներկայացվի ՖՀՄՍ-ների համաձայն և կազմակերպությունը պետք է ներկայացնի համեմատական տեղեկատվությունը կից ծանոթագրություններում:

ՀՀՄՍ 16, Հիմնական միջոցներ

Փոփոխությունն ուղղված է սպասարկող սարքավորումների դասակարգմանը: Այն պարզաբանում է, որ խոշոր պահեստամասերը, ռեզերվային սարքավորումները և սպասարկող սարքավորումները պետք է դասակարգվեն, որպես հիմնական միջոց, երբ դրանք համապատասխանում են հիմնական միջոց սահմանմանը ՀՀՄՍ 16-ի համաձայն, իսկ հակառակ դեպքում ճանաչվում են որպես պաշար:

ՀՀՄՍ 32, Ֆինանսական գործիքներ. Ներկայացում

Փոփոխությունը հստակեցնում է, որ սեփականատերերին կատարված բաշխումներին և կապիտալի գործարքի ծախսումներին վերաբերվող շահութահարկը պետք է հաշվառվի համաձայն ՀՀՄՍ 12-ի «Շահութահարկ»:

3.6. Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Դեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում: Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի նոր ստանդարտների, փոփոխություններն ու մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև: Թողարկվել են նաև այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք ըստ կանխատեսման էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխությունները պետք է կիրառվեն հետընթաց 2014թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, բացառությամբ ՀՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ ստանդարտում կատարված փոփոխությունների:

Դեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՀՀՄՍ 32, Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում (Փոփոխություն)

ՀՀՄՍ 32-ի փոփոխությունները ներառում են կիրառման ուղեցույց ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման համար ՀՀՄՍ 32-ի չափանիշների կիրառման ընթացքում անհամապատասխանությունների վերաբերյալ հետևյալ երկու բնագավառներում.

«Տվյալ պահին ունի հաշվանցման իրավաբանորեն ամրագրված իրավունք» դրույթի իմաստը՝ փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվանցման իրավունքը պետք է իրավաբանորեն ամրագրված լինի կազմակերպության բնականոն գործունեության ընթացքում, կազմակերպության և բոլոր մնացած կողմերի անվճարունակության և սնանկացման դեպքում, և այդ իրավունքը պետք է առկա լինի բոլոր կողմերի համար:

Քանի որ գործնականում ՀՀՄՍ 32-ում առկա «միաժամանակյա մարման» մեկնաբանության գործնական կիրառման մեջ առկա էր բազմազանություն, ուստի ՀՀՄՍ-ն պարզաբանեց զուտ մարման սկզբունքը և ներառեց համախառն մարման համակարգի օրինակ՝ ՀՀՄՍ 32-ի զուտ մարման չափանիշին բավարարող բնութագրիչներով:

ՀՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ

ՀՀՄՍ-ն նպատակ ունի փոխարինել ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը», ամբողջապես: Փոխարինող ստանդարտը (ՀՀՄՍ 9) թողարկվում է փուլերով: Մինչ այսօր, լույս են տեսել ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման, դասակարգման, չափման և ապաճանաչման գլուխները: Արժեզրկման մեթոդաբանության և հեջավորման հաշվառման հետ կապված գլուխները դեռ մշակման փուլում են:

Քանի որ ՀՀՄՍ 9 նախագծի «արժեզրկման փուլը» դեռ չի ավարտվել, ՀՀՄՍ-ն գտնում է, որ 2015թ. հունվարի 1 պարտադիր ամսաթիվը բավարար ժամանակ չի տալիս ընկերություններին, որպեսզի կիրառեն նոր ստանդարտները: Հետևաբար ՀՀՄՍ-ն որոշել է, որ պետք է նոր ժամկետ որոշվի, երբ ամբողջ ՀՀՄՍ 9 նախագիծը ավելի մոտ կլինի ավարտին: 2013թ. նոյեմբերի 9-ին կատարված ՀՀՄՍ 9-ի փոփոխությունները, հանում են պարտադիր ուժի մեջ մտնելու ամսաթիվը: Այնուամենայնիվ, կազմակերպությունները դեռ կարող են ընտրել ՀՀՄՍ 9-ի անմիջապես կիրառումը:

ՀՀՄՍ 36, Ոչ ֆինանսական ակտիվների գծով փոխհատուցվող գումարների բացահայտումներ (Փոփոխություն)

ՀՀՄՍ 36-ի փոփոխությունը վերաբերվում է արժեզրկված ակտիվների փոխհատուցվող գումարի վերաբերյալ տեղեկատվության բացահայտմանը, եթե այդ գումարը հիմնված է իրական արժեքի վրա, համաժ օտարման ծախսերը: Թույլատրելի է վաղ կիրառումը, եթե տվյալ կազմակերպությունն արդեն ընդունել է ՀՀՄՍ 13-ը:

ՀՀՄՍ 32, Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում (Փոփոխություն)

ՀՀՄՍ 32-ի փոփոխությունները վերաբերում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման համար չափանիշների կիրառման անհամապատասխանություններին: Փոփոխությունները վերաբերում են անհամապատասխանության երկու բնագավառների.

- Վերաբերում է «Տվյալ պահին ունի հաշվանցման իրավաբանորեն ամրագրված իրավունք» դրույթի իմաստին: ՀՀՄՍ-ն պարզաբանել է, որ հաշվանցման իրավունքը պետք է իրավաբանորեն ամրագրված լինի կազմակերպության բնականոն գործունեության ընթացքում, կազմակերպության և բոլոր մնացած կողմերի անվճարունակության և սնանկացման դեպքում, և այդ իրավունքը պետք է առկա լինի բոլոր կողմերի համար:

- Վերաբերում է համախառն մարման համակարգերին, ինչպիսիք են բանկերի և ֆինանսական հաստատությունների կողմից կիրառվող քլիրինգային կազմակերպությունները: Գործնականում ՀՀՄՍ 32-ի պահանջի մեկնաբանության մեջ առկա էր բազմազանություն, հաշվանցման հասնելու համար պետք է լինի ակտիվի և պարտավորության «միաժամանակյա մարում»:

Փոփոխությունների մեջ ՀՀՄՍ-ն պարզաբանել է զուտ մարման սկզբունքները և ներառել է «համախառն մարման համակարգի» օրինակ՝ ՀՀՄՍ 32-ի զուտ մարման չափանիշին բավարարող բնութագրիչներով:

Այս փոփոխությունները կատարվել են ՀՀՄՍ 7-ում լրացուցիչ բացահայտումների հետ համատեղ, հաշվանցման և նմանատիպ համաձայնությունների իրավունքների արդյունքների վրա:

Տարեկան բարեփոխումներ 2010-2012թթ.

2010-2012թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՀՀՄՍ-ներում կատարել են որոշ անցյալ փոփոխություններ: Բարեփոխումները ուժի մեջ են մտնում 2014թ. հուլիսի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 13, Իրական արժեքի չափում

Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

- փոփոխվում են եզրակացությունների համար հիմքերը՝ պարզաբանելու համար, որ ընկերությունը պարտադրված չէ հաստատված տոկոսադրույք չունեցող կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը զեղչել հաշիվ-ապրանքագրում նշված գումարից ցածր արժեքի, եթե զեղչման ազդեցությունն էական չէ:

ՀՀՄՍ 16, Հիմնական միջոցներ

Վերագնահատման մեթոդ-կուտակված մաշվածության համամասնորեն վերաներկայացում

- քննարկվում է հիմնական միջոցի միավորի համար վերագնահատման մեթոդի կիրառմամբ չափվող կուտակված մաշվածության հաշվարկման եղանակների փաստացի բազմազանությունը,
- պարզաբանվում է, որ համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է այնպիսի եղանակով, որը համադրելի է հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը,
- պարզաբանվում է, որ կուտակված մաշվածությունը հաշվարկվում է որպես համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված արժեզրկումից կորուստները հաշվի առնելուց հետո հաշվարկված հաշվեկշռային արժեքի տարբերություն:

ՀՀՄՍ 24, Կապակցված կողմերի բացահայտումներ

Առանցքային կառավարչական անձնակազմ

- փոխում է «կապակցված կողմ»-ի նշանակությունը, որպեսզի ներառի «կառավարչական կազմակերպությունները», որոնք մատուցում են առանցքային կառավարչական անձնակազմի ծառայություններ՝ հաշվետվություն տրամադրող կազմակերպությանը,
- պահանջում է բացահայտել գումարները, հաշվետվություն տրամադրող կազմակերպության կողմից ճանաչված որպես սպասարկման վճար առանձին կառավարչական կազմակերպությանը, առանցքային կառավարչական անձնակազմի ծառայություններ մատուցելու համար,
- ապահովում է օգնություն, այնպես որ հաշվետվություն տրամադրող կազմակերպությունը պարտավոր չէ բացահայտել առանցքային կառավարչական անձնակազմի փոխհատուցման բաղադրիչները, երբ փոխհատուցումը կատարվում է կառավարչական կազմակերպության կողմից:

ՀՀՄՍ 38, Ոչ նյութական ակտիվներ

Կուտակված ամորտիզացիայի վերագնահատման համամասնական մեթոդի վերաձևակերպումը

- կատարում է ոչ նյութական ակտիվների հաշվառմանը համարժեք փոփոխություններ, ինչպես վերոնշյալ ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ»-ի համար:

Տարեկան բարեփոխումներ 2011-2013թթ.

2011-2013թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Բարեփոխումները ուժի մեջ են մտնում 2014թ. հուլիսի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 13, Իրական արժեքի չափում

Պարբերություն 52-ի գործողության ոլորտը (պորտֆելի բացառությունը)

- պարզաբանում է, որ ՖՀՄՍ 13.52-ի պորտֆելի բացառությունը վերաբերում է բոլոր հաշվառված պայմանագրերին ՀՀՄՍ 39-ի «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» կամ ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» շրջանակներում, անկախ նրանից թե այդ պայմանագրերը վերաբերում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների սահմանմանը համապատասխան ՀՀՄՍ 32-ի «Ֆինանսական գործիքներ. Ներկայացում»,
- սա նշանակում է, որ ապրանքային պայմանագրերը կարող են կնքվել զուտ դրամով և հաշվառվել որպես ֆինանսական գործիք, կարող են համապատասխանել այս բացառությանը:

ՀՀՄՍ 40, Ներդրումային գույք

Պարզաբանում է ՖՀՄՍ 3-ի և ՀՀՄՍ 40-ի փոխկապակցվածությունը, գույքը դասակարգելով որպես ներդրումային գույք կամ սեփական գույք

Պարզաբանում է, որ ՖՀՄՍ 3-ը և ՀՀՄՍ 40-ը իրարամերժ չեն: Այդ իսկ պատճառով, սահմանում է.

- անկախ նրանից թե գույքը սեփական գույք է կամ ներդրումային գույք, պահանջվում է դատողություն կատարել համաձայն ՀՀՄՍ 40.7-14-ի,
 - անկախ նրանից թե ներդրումային գույքի ձեռքբերումը սահմանվում է որպես բիզնես համադրություն կամ ակտիվի ձեռքբերում, պետք է հղում կատարվի ՖՀՄՍ 3-ին (ոչ ՀՀՄՍ 40.7-14) որոշելու, թե արդյոք դա բիզնես համադրություն է:
- Թողարկվել են որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, սակայն չի ակնկալվում, որ դրանք ԸՆԿերության ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն կունենան:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1. Ապահովագրության պայմանագրեր

Ապահովագրության պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, համաձայն որի կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադիրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադիրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադիրի վրա: Ապահովագրական ռիսկը նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը ցանկացած սցենարի (ընթացքի) դեպքում կարող էր ապահովագրողի կողմից նշանակալի լրացուցիչ հատուցումների վճարման պատճառ դառնալ, բացառությամբ այն սցենարների, որոնք չունեն կոմերցիոն բովանդակություն (այսինքն՝ գործարքի տնտեսական կողմի վրա նշմարելի ազդեցություն չունեն): Վերը նշված լրացուցիչ հատուցումները վերաբերում են այն գումարներին, որոնք գերազանցում են ապահովագրական պատահարի տեղի չունենալու դեպքում վճարվելիք գումարները:

Ապահովագրության պայմանագրերը կարող են նաև փոխանցել ֆինանսական ռիսկ: Ֆինանսական ռիսկը ստորև նշվածներից մեկի կամ մի քանիսի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ սահմանված տոկոսադրույք, ֆինանսական գործիքի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկունակություն կամ վարկային ինդեքս կամ այլ փոփոխական պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին:

Պայմանագիրը, որը բավարարում է ապահովագրության պայմանագրի սահմանմանը, մնում է որպես ապահովագրության պայմանագիր մինչև իր ժամկետի վերջը, նույնիսկ եթե ապահովագրության ռիսկը զգալիորեն կրճատվում է այդ ժամանակաշրջանի համար, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց գործողության ժամկետը լրանում է:

Ճանաչում և չափում

Համախառն ապահովագրավճարներ

Համախառն ապահովագրավճարներն ընդգրկում են պայմանագրով նախատեսված ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր ստացվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են պոլիսի ուժի մեջ մտնելու օրվանից:

Համախառն ապահովագրավճարները ընդգրկում են միջնորդներին վճարվելիք միջնորդավճարները, և չեն ներառում ապահովագրավճարների գծով հարկերը և այլ պարտադիր վճարները:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստ

Չվաստակած ապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված ապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերում են հաշվեկշռի անսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է, որպես չվաստակված ապահովագրավճարների պահուստ:

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարները ընդգրկում են պայմանագրով նախատեսված ծածկույթի ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր վճարվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են պոլիսի ուժի մեջ մտնելու օրվանից:

Չվաստակած վերաապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված վերաապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերվում են հաշվեկշռի անսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է՝ որպես չվաստակված ապահովագրավճարների համախառն պահուստում վերաապահովագրողների մասի փոփոխություն:

Համախառն հատուցումներ

Համախառն հատուցումները բաղկացած են ապահովադիրներին վճարված հատուցումներից, ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների գնահատականների փոփոխություններից, կարգավորման ներքին և արտաքին ծախսերից: Հատուցումները ճանաչվում են դրանց ներկայացման պահին:

Համախառն հատուցումներում վերաապահովագրողների մասը

Հատուցումներում վերաապահովագրողների մասը ճանաչվում են այն ժամանակ, երբ դրանց գծով համախառն ապահովագրական հատուցումը ճանաչվում է համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն:

Վերաապահովագրության միջնորդավճարներից եկամուտ

Ստացված կամ ստացվելիք վերաապահովագրության միջնորդավճարները, որոնք չեն պահանջում ընկերությունից հավելյալ ծառայությունների մատուցում, ընկերության կողմից ճանաչվում են որպես եկամուտ համապատասխան պոլիսների ուժի մեջ մտնելու կամ վերակնքման պահին: Այնուամենայնիվ, եթե հավանական է, որ ընկերությունից կպահանջվի հետագա ծառայությունների մատուցում, ապա միջնորդավճարը, կամ դրա մի մասը, հետաձգվում է և ճանաչվում որպես եկամուտ այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվում են ծառայությունները:

Ձեռքբերման ծախսեր

Ընդհանուր ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի համար, երբ դրանք տեղի են ունեցել: Ձեռքբերման ծախսերն ընդգրկում են ուղղակի ծախսեր, ինչպիսիք են օրինակ միջնորդավճարները և բժշկական վճարները: Ձեռքբերման ծախսերի մի մասը հետաձգվում է հետագա հաշվապահական ժամանակաշրջանների համար այդ հետագա ժամանակաշրջաններ հետաձգված ապահովագրավճարներին համապատասխանելու համար: Ձեռքբերման ծախսերի հետաձգումը հաշվարկվում է՝ յուրաքանչյուր պայմանագրի գծով ձեռքբերման ծախսի վրա կիրառելով չվաստակված ապահովագրավճարների և գրանցված ապահովագրավճարների հարաբերակցությունը:

Ապահովագրական պարտավորություններ

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները ճանաչվում են այն ժամանակ, երբ պայմանագրերը ուժի մեջ են մտնում: Այս պարտավորությունները հայտնի են որպես չկարգավորված պահանջների պահուստ, որը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ տեղի ունեցած, բայց դեռևս չվճարված պահանջների գծով գնահատված վերջնական ծախսումների վրա, անկախ նրանից ներկայացված են, թե՛ ոչ, ինչպես նաև համապատասխան պահանջների գծով կարգավորման ծախսերի վրա, հանած ակնկալվող սուբրոգացիոն և այլ վերականգնումները: Որոշ պահանջների ժամուցման կամ կարգավորման առումով կարող են լինեն հետաձգումներ, հետևաբար այս պահանջների վերջնական արժեքը չի կարող հստակորեն որոշվել հաշվետու ամսաթվի դրությամբ: Պարտավորությունը հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով ստանդարտ ակտուարական պահանջների կանխատեսման մեթոդները, որոնք հիմնվում են էմպիրիկ տվյալների և ընթացիկ ենթադրությունների վրա, որոնք կարող են ներառել բացասական շեղման մարժա: Պարտավորությունը չի գերազանցում փողի ժամանակային արժեքով: Հավասարակշռման և աղետների պահուստ չի ճանաչվում: Պարտավորություններն ապաճանաչվում են, երբ պայմանագրային պարտավորությունները կատարվում են կամ երբ այն դադարում է:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստը իրենից ներկայացնում է ապահովագրավճարների այն մասը, որը ակնկալվում է ստացվել հետագա ժամանակաշրջանների ընթացքում:

Սովորաբար պահուստը նվազեցվում է պայմանագրի ժամկետի ընթացքում և ճանաչվում է որպես ապահովագրավճարներից եկամուտ:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին գնահատում է, թե արդյոք իր կողմից ճանաչված ապահովագրության պարտավորությունները համարժեք են՝ օգտագործելով իր ապահովագրության պայմանագրերի ներքո ապագա դրամական միջոցների հոսքերի ընթացիկ գնահատումները: Եթե այդ գնահատումը ցույց է տալիս, որ իր ապահովագրական պարտավորությունների հաշվեկշռային արժեքը (հանած դրանց հետ կապված՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները) համարժեք չեն գնահատված՝ ապագա դրամական միջոցների հոսքերի հետ համեմատած, ապա ամբողջ պակասուրդը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Վերաապահովագրություն

Ընկերությունը փոխանցում է ապահովագրական ռիսկը իր սովորական գործունեության ընթացքում՝ բոլոր դասերի գծով: Վերաապահովագրության գծով ակտիվները ներկայացնում են վերաապահովագրող ընկերություններից ստացվելիք գումարները:

Վերաապահովագրության գծով ակտիվները վերանայվում են արժեզրկման համար յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, երբ հաշվետու տարվա ընթացքում առաջանում է արժեզրկման հայտանիշ: Արժեզրկումն առաջանում է այն ժամանակ, երբ կա օբյեկտիվ վկայություն, որ վերաապահովագրական ակտիվի ճանաչումից հետո ընկերությունը կարող է չստանալ բոլոր ստացվելիք գումարները, որոնք պետք է վճարվեն համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն և այդ իրադարձությունն ունի արժանահավատորեն չափելի ազդեցություն այն գումարների վրա, որոնք ընկերությունը ստանալու է վերաապահովագրողից: Արժեզրկման կորուստը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վերապահովագրության ձեռքբերման գծով օգուտը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ձեռքբերման օրվա դրությամբ և չեն ամորտիզացվում: Վերապահովագրության համաձայնագրերը չեն ազատում Ընկերությանը ապահովագրիչների նկատմամբ իր պարտավորություններից:

Վերապահովագրության գծով պարտավորություններ են հանդիսանում վերապահովագրող ընկերություններին վճարվելիք գումարները: Վճարվելիք գումարները գնահատվում են համապատասխան վերապահովագրության պայմանագրերի համաձայն: Ապահովագրավճարները և պահանջները ներկայացվում են համախառն հիմքով՝ ստանձնած և փոխանցված վերապահովագրության համար:

Վերապահովագրության գծով ակտիվները և պարտավորությունները ապաճանաչվում են, երբ պայմանագրային իրավունքները կատարվում են, կամ, երբ պայմանագիրը փոխանցվում է այլ կողմի:

Ապահովագրության գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

Ապահովագրության գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքերը հաշվառումը նույնն է, ինչ ֆինանսական գործիքներինը, ինչպես նկարագրված է 4.7, 4.8 և 4.9 ծանոթագրություններում:

4.2. Եկամուտների և ծախսերի ճանաչում

Ապահովագրության պայմանագրերին չվերաբերող եկամուտների և ծախսերի ճանաչման չափանիշները ներկայացված են ստորև:

Ներդրումային եկամուտ

Ներդրումային եկամուտը բաղկացած է շահաբաժիններից, տոկոսային եկամուտից, պարտքային արժեթղթերի և այլ վարկերի և դեբիտորական պարտքերի ամորտիզացված արժեքի փոփոխություններից:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրմանը զուգահեռ և հաշվարկվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Ընկերության կողմից գումարը ստանալու իրավունքը:

Ներդրումներից զուտ օգուտ կամ վնաս

Ներդրումներից զուտ օգուտը կամ վնասը, որը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ներառում է ֆինանսական ակտիվներից և ներդրումային գույքից օգուտը կամ վնասը: Ներդրումների վաճառքից օգուտը կամ վնասը հաշվառվում է որպես զուտ վաճառքի և սկզբնական կամ ամորտիզացված արժեքի տարբերություն և ճանաչվում է վաճառքի գործառնության պահին:

Ջուտ առևտրային եկամուտ

Ջուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Ջուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առջ ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը:

Ֆինանսական ծախս

Վճարված տոկոսագումարը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրմանը զուգահեռ և հաշվարկվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսագումարը ներառվում է տոկոսային ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքում:

4.3. Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամուտում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առջ ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

31 դեկտեմբերի 2013

31 դեկտեմբերի 2012

ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	405.64	403.58
ՀՀ դրամ/1 Եվրո	559.54	532.24

4.4. Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են այլ համապարփակ եկամտում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամտում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային վճարումները, ապա հարկվող շահույթը կամ կորուստը հիմնվում են մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ դիրք հարկային օրենսդրությունն արտածելու և հարկային հաշվարկները վերանայելու համար: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես հաջորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գույքի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում ԸՆԿերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

4.5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ընդգրկում են կանխիկ դրամը և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6. Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնական գործունեության ընթացքում ԸՆԿերությունն օգտագործում է բանկերում բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7. Ֆինանսական գործիքներ

ԸՆԿերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառյալ նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. դեբիտորական պարտքեր, ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա՝ հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ընկերությունը սահմանում է իր ֆինանսական ակտիվների դասակարգումը սկզբնական ճանաչումից հետո և անհրաժեշտության և հնարավորության դեպքում կատարում է վերագնահատում յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Այնուհետև դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով: Դեբիտորական պարտքերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Ընկերությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը վերագրվում է այլ համապարփակ եկամտին, մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում այլ համապարփակ եկամտում ճանաչված շահույթը կամ վնասը վերաձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Ընկերությունն իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4.8. Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ Ընկերությունն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Ընկերությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են պարտքային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Եթե հետագա ժամանակաշրջանում, արժեզրկումից կորուստը նվազում է և այդ նվազեցումը կարող է օբյեկտիվորեն կապվել արժեզրկման ճանաչումից հետո առաջացող որևէ իրադարձության հետ, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է: Արժեզրկումից կորստի որևէ հետագա հակադարձում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, այն դեպքում, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է հակադարձման ամսաթվով իր հակադարձված արժեքին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, այլ համապարփակ եկամտից վերաձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի կատարվում: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը համապարփակ ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.9. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն անողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Ընկերությունը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Ընկերության շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Ընկերության կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրսգրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Ընկերությունը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.9.1 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Չետզման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Չետզման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Չետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Չետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեզրկվում են հետզման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.10. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, բացառությամբ Ընկերության շենքի, որը ներկայացված է իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույթաչափերը՝

Օգտակար ծառայության ժամկետ
(տարիներ)

Տոկոսադրույք (%)

Շենքեր	50	2
Համակարգիչներ և կապի միջոցներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20
Հիմնական միջոցներ 50 հազար դրամից ցածր արժեքով	1	100

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Ընկերությունը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում ճանաչում է կապիտալ բնույթի ծախսումները, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վերագնահատման հաճախականությունը կախված է արժեզրկված ակտիվների իրական արժեքում փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտիվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է այլ համապարփակ եկամտում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է համապարփակ ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը: Այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով այլ համապարփակ եկամտում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.11. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և ապահովագրական պորտֆելի ձեռքբերման գծով ոչ նյութական ակտիվից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում: Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

Համաձայն ՖՀՄՍ 4 «Ապահովագրության պայմանագրեր» պահանջների Ընկերությունը տարվա ընթացքում ձեռքբերված ապահովագրական պորտֆելի գծով կիրառել է տարանջատված ներկայացում, որի դեպքում ձեռք բերված ապահովագրության պայմանագրերի իրական արժեքը բաժանվում է երկու բաղադրիչների՝

- ա) պարտավորություն, որը չափվում է ապահովագրողի կողմից թողարկվող ապահովագրության պայմանագրերի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան.
- բ) ոչ նյութական ակտիվ, որն իրենից ներկայացնում է՝ (i) ձեռք բերված պայմանագրային ապահովագրական իրավունքների և ստանձնած ապահովագրական պարտավորությունների իրական արժեքի, և (ii) «ա» կետում նկարագրված գումարի միջև տարբերությունը: Այդ ակտիվի հետագա չափումը համապատասխանում է դրա հետ կապված ապահովագրական պարտավորության չափմանը:

4.12. Վարձակալություն

Գործառնական վարձակալություն – Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.12.1. Ներգրված միջոցներ

Ներգրված միջոցները, որոնք ներառում են բանկերից ստացված վարկերը, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ համաձայն գործառնականությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձեռքբերման, կառուցման կամ արտադրության հետ, ներառվում են այդ ակտիվի արժեքում, համաձայն ՀՀՄՍ 23 «Փոխառության ծախսումներ» պահանջների:

4.13. Կենսաթոշակներ

Ընկերությունում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում:

4.14. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.15. Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են եկամուտներին գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

4.16. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.17. Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելվածար:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.18. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Ընկերության առևտրային գործունեությունը:

5. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ

Ապահովագրության պայմանագրերի համար գնահատումները պետք է կատարվեն ինչպես հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկայացված ակնկալվող պահանջների վերջնական արժեքի համար, այնպես էլ այն ակնկալվող պահանջների արժեքի համար, որոնք տեղի են ունեցել, սակայն դեռևս չեն ներկայացվել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ (ՏՀՊՊ): Պահանջների վերջնական արժեքը հստակորեն որոշելու համար կարող է զգալի ժամանակ պահանջվել և որոշ պայմանագրերի դեպքում, տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջները կազմում են հաշվեկշռի պարտավորությունների մեծ մասը:

Այս գնահատումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունը կայանում է նրանում, որ Ընկերության անցյալ պահանջները կարող են օգտագործվել պահանջների հետագա զարգացումը և, հետևաբար նաև, պահանջների վերջնական արժեքը կանխատեսելու համար: Որպես այդպիսին, այս մեթոդներն արտացոլում են վճարված և տեղի ունեցած վնասները, յուրաքանչյուր պահանջի գծով միջին ծախսերը, նախորդ տարիներում հետազոտված պահանջների քանակը և ակնկալվող վնասաբերության ցուցանիշները: Պահանջների պատմական զարգացումը հիմնականում վերլուծվում է տվյալ տարվա համար, սակայն կարող է նաև վերլուծվել աշխարհագրական տարածքից ելնելով, ինչպես նաև ըստ նշանակալի ապահովագրական դասերի: Հիմնական դժվարությունը կայանում է նրանում, որ Հայաստանի ապահովագրական շուկան համեմատաբար նոր է և անկայուն, այդուամենայնիվ, գրեթե անհնար է կատարել ապագա գնահատումներ՝ հիմնվելով պատմական տվյալների վրա:

Ընկերությունը գնահատում է ներկայացված պահանջները «դեպք-առ-դեպք» մեթոդով, բացառությամբ ապահովագրության այն դասերի, որտեղ պահանջների՝ հաշվետու ամսվա և դրան նախորդող տասնմեկ ամիսների միջին ամսական քանակը հիսուն և ավելի է, և պահանջների հատուցումների չափերն այդ ամիսների ընթացքում էականորեն չեն տատանվել: Նման դասերի համար օգտագործվում է «միավոր պահանջի հատուցման միջին չափի» գնահատում: ՏՉՊՊ-ն գնահատվում է՝ օգտագործելով վիճակագրական մեթոդներ, որոնք հիմնվում են անցյալ տարիների պատմական տվյալների վրա:

Ղեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից պահուստներ

Ընկերությունը գնահատում է խնդրահարույց ղեբիտորական պարտքերը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Սասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբերվել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի ղեբիտորական պարտքերի համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Ընկերությունը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի և արդյունաբերության ռիսկում և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Ընկերության ներդրումային արժեթղթերը ներառում են պետական պարտատոմսեր: Սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է այլ համապարփակ եկամտում:

Փոխկապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ փոխկապակցված կողմերի հետ: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 32 ծանոթագրությունը:

6. Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	Հող	Շենքեր	Համակարգ-չային տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Գրասենյակային սարքա-վորումներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
ՎԵՐԱԳՆԱԿԱՏՎԱԾ ԱՐԺԵՔ							
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	64,200	73,395	49,731	96,001	1,372	284,699
Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
Մվելացում	-	772,737	96,728	6,501	48,494	12,395	936,855
Օտարում	-	-	-	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-	-	-	-
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	836,937	170,123	56,232	144,495	13,767	1,221,554
Վերագնահատում	-	22,055	-	-	-	-	22,055
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	-	(14,575)	-	-	-	-	(14,575)
Մվելացում	8,030	239,283	138,772	61,089	53,795	3,117	504,086
Օտարում	-	-	(893)	(9,925)	(5,443)	(4,098)	(20,359)
Վերադասակարգում	-	-	-	-	-	-	-
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,030	1,083,700	308,002	107,396	192,847	12,786	1,712,761
ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ							
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	45,599	19,558	28,725	946	94,828
Հատկացումներ	-	3,210	29,425	8,561	25,316	299	66,811
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
Օտարում	-	-	-	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-	-	-	-
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	3,210	75,024	28,119	54,041	1,245	161,639
Հատկացումներ	-	11,365	42,280	14,834	37,204	881	106,564
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	-	(14,575)	-	-	-	-	(14,575)
Օտարում	-	-	(871)	(6,580)	(4,071)	(563)	(12,085)
Վերադասակարգում	-	-	-	-	-	-	-
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	116,433	36,373	87,174	1,563	241,543
ՀԱՇՎԵԿՈՒՄՅՈՒՆ ԱՐԺԵՔ							
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,030	1,083,700	191,569	71,023	105,673	11,223	1,471,218
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	833,727	95,099	28,113	90,454	12,522	1,059,915

Ակտիվների վերագնահատում

Ընկերության անշարժ գույքի վերջին վերագնահատումը կատարվել է 21.12.2013թ. «Ար Վի ԷՆ» ՍՊԸ կողմից: Վերագնահատման արդյունքում գրանցվել է անշարժ գույքի որոշ միավորների արժեքի աճ ընդամենը 22,055 հազար դրամ գումարի չափով, որը վերագրվել է վերագնահատման պահուստին, ինչպես նաև 298 հազար դրամի ծախս, որը գրանցվել է շահույթ վնասում: Իրական արժեքով անշարժ գույքի գնահատման համար Ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Եթե շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր 981,856 հազար դրամ (2012թ. 15,428 հազար դրամ):

Ընկերության ղեկավարության գնահատմամբ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց շուկայական արժեքից:

Անավարտ շինարարություն

2012թ. օգոստոս ամսին ընկերությունը ձեռք է բերել վարչական տարածք ընդհանուր 728.6 քմ մակերեսով 731,699 հազար դրամ գումարով: Ակտիվի արժեքին արդեն իսկ կապիտալացվել էր 21,385 հազար դրամ վերանորոգման և այլ աշխատանքների վերաբերող ծախսեր, ինչպես նաև 19,923 հազար դրամ փոխառության ծախսումներ:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գլխամասային գրասենյակի տարածքի արժեքը աճել է 2013թ. 2-րդ կիսամյակի ընթացքում կատարված վերանորոգման աշխատանքների գումարով և կազմել է 1,002,000 հազար դրամ:

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 91,785 հազար դրամ (2012թ. 94,848 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2013թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության 1,002,000 հազար դրամ արժեքով շենքը գրավադրված էր որպես ապահովություն ընկերության փոխառությունների համար (տես ծանոթագրություն 18):

7. Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Լիցենզիաներ և վստահագրեր	Համակարգչային ծրագրեր, լիցենզիաներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
---------------	--------------------------	------------------------------------	---------------------------	----------

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ				
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	9,940	-	9,940
Ավելացում		61,414	648,145	709,559
Օտարում				-
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	71,354	648,145	719,499
Ավելացում	23,018	12,671	2,019	14,690
Օտարում				
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,018	84,025	650,164	757,207
ԱՍՈՐՏԻԶԱՑԻԱ				
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		3,155	-	3,155
Մասհանումներ		4,050	175,297	179,347
Օտարում				-
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	7,205	175,297	182,502
Մասհանումներ	17,860	8,954	472,966	499,780
Օտարում				
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,860	16,159	648,263	682,282
ՀԱՇՎԵԿՈՒՑԻՆ ԱՐԺԵՔ				
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,158	67,866	1,901	74,925
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	64,149	472,848	536,997

2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԸՆկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ:

2012թ.-ին ընկերությունը ձեռք է բերել «Կասկադ Ինշուրանս» ԱՓԲԸ ապահովագրական պրոտֆել, որի արդյունքում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ԸՆկերությունը ճանաչել է ոչ նյութական ակտիվ, որն իրենից ներկայացնում է ԸՆկերության կողմից ձեռքբերված ակտիվի իրական արժեքի և վճարված փոխհատուցման դրական տարբերություն:

Լիցենզիաների և վստահագրերի ավելացումներում ներառված են 17,509 սկզբնական արժեքով լիցենզիաներ՝ ստացված բաժնետիրոջ կողմից որպես շնորհ: Այդ լիցենզիաների գծով ամորտիզացիոն ծախսերը կազմել են 13,132 հազար դրամ և նույն չափով ԸՆկերությունը ճանաչել է եկամուտ շնորհներից՝ նվազեցնելով պարտավորություններում ճանաչված ակտիվների վերաբերող շնորհները (տես ծանոթ. 21):

8. Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Կանխվածարձեր և այլ դեբիտորներ	285,438	260,210
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(2,067)	(1,055)
	283,370	259,155
Կանխավճարված հարկեր և տուրքեր	150	-
Հաշվարկներ աշխատակիցների հետ	88	5,879
ԱՊՊԱ կտրոններ	3,757	4,335
Այլ	2,953	5,829
ԸՆդամենը այլ ակտիվներ	290,319	275,198

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	ԸՆդամենը
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	305
Տարվա ծախս	4,322
Դուրսգրում	(3,572)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,055
Տարվա ծախս	1,841
Դուրսգրում	(966)
Վերադարձ	137
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,067

9. Հետաձգված ձեռքբերման ծախսեր

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի համար հետաձգված ձեռքբերման ծախսերի շարժը.

Հազար ՀՀ դրամ	ԸՆդամենը
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	231,115
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	1,589,817
Ծախսի ճանաչում	(1,289,893)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	531,039
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	1,326,122

Ծախսի ճանաչում

(1,326,872)

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

530,289

10. Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Պահանջներ ապահովադիրների նկատմամբ	938,066	636,137
Պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ	20,825	46,453
Պահանջներ միջնորդների նկատմամբ	756,419	250,372
Սուբրոգացիա	23,198	18,106
Այլ ապահովագրական դեբիտորական պարտքեր	45,240	73,000
Արժեզրկումից պահուստ	(38,171)	(33,954)
Ընդամենը ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	1,745,577	990,114

Այլ ապահովագրական դեբիտորական պարտքերը ներառում են «Կասկադ Ինշուրանս» ԱՓԲԸ ստացվելիք գումարները ապահովագրական պորտֆելի ձեռքբերման արդյունքում:

Տարվա ընթացքում արժեզրկումից պահուստի շարժը ապահովագրության գծով դեբիտորական պարտքերի գծով հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,400
Տարվա ծախս	27,183
Դուրս գրում	(57,454)
Վերադարձ	52,825
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	33,954
Տարվա ծախս	16,581
Դուրս գրում	(17,378)
Վերադարձ	5,014
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	38,171

11. Այլ անձանց տրամադրված փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Փոխառություններ ֆիզիկական անձանց	5,512	5,794
Փոխառություններ իրավաբանական անձանց	3,010	-
Կասկածելի փոխառությունների գծով պահուստ	(1,781)	-
Ընդամենը այլ անձանց տրամադրված փոխառություններ	6,741	5,794

Այլ անձանց տրամադրված փոխառությունների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-
Տարվա ծախս	-
Դուրսգրում	-
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-
Տարվա ծախս	1,781
Դուրսգրում	-
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,781

12. Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Ավանդներ	1,377,573	1,455,870
Փոխառություններ ֆինանսական կազմակերպություններից	172,538	222,807
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,550,111	1,678,677

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ ֆինանսական կազմակերպություններում ավանդները 1,158,048 հազար դրամ գումարով (84%) կենտրոնացված են 5 բանկերում (2012թ` 995,665 հազար դրամ (68%) կենտրոնացված 5 բանկերում):

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ներգրաված միջոցների և ստացված երաշխիքների դիմաց գրավադրված ավանդներ չկան (2012թ.՝ 58,723 հազար դրամ):

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավանդների վրա դրված չէ արգելանք ԴԱԳԿ կողմից՝ Ընկերության դեմ ներկայացված հայցի գծով դատարանի կայացված որոշման համաձայն (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 58,170 հազար դրամ):

13. Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Չգնանշվող ներդրումներ		
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	2,202,680	1,608,764
Ոչ պետական պարտատոմսեր	184,588	97,321
Ընդամենը ներդրումներ	2,387,268	1,706,085

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Չգնանշված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է՝ կիրառելով գնահատման մեխանիզմ, որն օգտագործում է ներկա շուկայական դրույքները՝ ապագա դրամական հոսքերը գեղչելու համար:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31		2012 դեկտեմբերի 31	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	8.13%-10.85%	2014-2032	13.62%-15.04%	2014-2028
Ոչ պետական պարտատոմսեր	10.1-13%	2013-2016	10.1-12%	2013-2014

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը 3,825,577 հազար դրամով իրական արժեքով (2012թ.՝ 2,112,213 հազար դրամ) վաճառվել են երրորդ անձանց ռեպո համաձայնագրերով՝ 6 ամիսը չգերազանցող ժամանակահատվածներով: Դրանք վերադասակարգվել են որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր հաշվապահական հաշվեկշռում՝ առանձին տողում (Ծանոթ. 18):

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Կանխիկ դրամական միջոցներ	4,259	4,703
Բանկային հաշիվներ	129,233	121,961
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	133,492	126,664

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 101,886 հազար դրամ գումարով (79%) հաշիվները կենտրոնացված են 5 բանկերում (2012թ. 109,726 հազար դրամ (90%) կենտրոնացված 5 բանկերում):

15. Բաժնետիրական կապիտալ

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և անբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում 2,536,260 հազ. դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 4,124 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 615,000 դրամ անվանական արժեքով (2012թ.՝ 4,124 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 400,255 դրամ անվանական արժեքով):

2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31		2012 դեկտեմբերի 31	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում, %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում, %
Լևոն Ալբունյան	634,065	25	412,663	25
«Ինվեստ-Պոլիս» ՓԲԸ	1,902,195	75	1,237,989	75
Ընդամենը	2,536,260	100	1,650,652	100

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում:

2013թ. Ընկերությունն ավելացրել է բաժնետիրական կապիտալը 885,608 հազար դրամ գումարով (2012թ.՝ 701,247 հազար դրամ):
 Ընկերության բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է ի հաշիվ ընկերության չբաշխված շահույթի:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր ֆինանսական ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15 %-ի չափով: 2013թ առաջին կիսամյակում գլխավոր պահուստը ավելացվել է 5,704 հազար դրամով ընկերության կուտակված շահույթի հաշվին:

16. Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31			2012 դեկտեմբերի 31		
	Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություն	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ	Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություն	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
Չվաստակած ապահովագրական վճարներ	2,989,290	(827,958)	2,161,332	2,809,936	(854,890)	1,955,046
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	239,630	(19,997)	219,633	205,009	(12,937)	192,072
Ներկայացված պահանջներ	437,326	(56,116)	381,210	307,598	(72,383)	235,215
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ / 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,666,246	(904,071)	2,762,175	3,322,543	(940,210)	2,382,333

Ծանոթագրության հաջորդ աղյուսակները ցույց են տալիս ապահովագրական պարտավորությունների և համապատասխան վերապահովագրական ակտիվների գծով փոփոխությունները հաշվետու ժամանակաշրջանների համար:

Չվաստակած ապահովագրավճարներ

	Ապահովագրական պարտավորություններ	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	993,108	(279,320)	713,788
Ընթացիկ ժամանակաշրջանի ապահովագրավճարներ	9,031,253	(1,608,300)	7,422,953
Ընթացիկ ժամանակաշրջանում վաստակած ապահովագրավճարներ	(7,214,425)	1,032,730	(6,181,695)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,809,936	(854,890)	1,955,046
Ընթացիկ ժամանակաշրջանի ապահովագրավճարներ	7,608,469	(1,152,185)	6,456,284
Ընթացիկ ժամանակաշրջանում վաստակած ապահովագրավճարներ	(7,429,115)	1,179,117	(6,249,998)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,989,290	(827,958)	2,161,332

Պահանջների պահուստ

	Ապահովագրական պարտավորություններ	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	109,439	(20,918)	88,521
Ներկայացված պահանջներ	347,316	(167,523)	179,793
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	456,755	(188,441)	268,314
ՆՉՊՊ և ՏՉՊՊ ընդհանուր փոփոխություն	3,646,985	(77,912)	3,569,073
Վճարված հատուցումներ	(3,591,133)	181,033	(3,410,100)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	512,607	(85,320)	427,287
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	205,009	(12,937)	192,072
Ներկայացված պահանջներ	307,598	(72,383)	235,215
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	512,607	(85,320)	427,287
ՆՉՊՊ և ՏՉՊՊ ընդհանուր փոփոխություն	3,988,559	(103,684)	3,884,875
Վճարված հատուցումներ	(3,824,210)	112,891	(3,711,319)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	676,956	(76,113)	600,843
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	239,630	(19,997)	219,633
Ներկայացված պահանջներ	437,326	(56,116)	381,210
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	676,956	(76,113)	600,843

17. Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Ապահովադիրներին վճարվելիք գումարներ	15,333	55,258
Վերապահովագրողներին վճարվելիք գումարներ	578,082	480,297
Գործակալներին, բրոքերներին և միջնորդներին վճարվելիք գումարներ	162,684	63,202
Ընդամենը ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	756,099	598,757

18. Բանկերից ստացված վարկեր

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Բանկերից ստացված վարկեր	1,153,109	197,572
Ընդամենը	1,153,109	197,572

Բանկերից ստացված վարկերը` 701,729 հազար դրամ գումարով ունեն փոփոխական տոկոսադրույք, որը հաշվարկվում է գործընկեր բանկի կողմից հաշվարկվող հաշվարկային տոկոսադրույքով, գումարած 2.2% տարեկան: Բանկերից ստացված մնացած վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույք:

Ստացված վարկերի ապահովման միջոց են հանդիսանում Ընկերության զխամասային գրասենյակի տարածքը, բանկային հաշիվների շրջանառությունը, կորպորատիվ պարտատոմսերը (տես ծանոթ. 6, 13), ինչպես նաև բաժնետիրոջ կողմից տրված երաշխավորությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2012թ.` ոչինչ):

19. Հետգնման պայմանով գրավադրված արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	Ակտիվ 2012	Պարտավորություն 2013 դեկտեմբերի 31	Պարտավորություն 2012
Վաճառքի համար մատչելի ներդրումներ (ծանթ. 13)	3,825,577	2,112,213	3,698,671	2,051,223
Ընդամենը	3,825,577	2,112,213	3,698,671	2,051,223

20. Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ

Ապագա ժամանակաշրջանի եկամուտները վերաբերում են հետաձգված վերապահովագրության պայմանագրերից ստացվելիք միջնորդավճարներին, որոնց շարժը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	38,713
Հետաձգված վերապահովագրության միջնորդավճարներ եկամտի ճանաչում	151,124 (105,276)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	84,561
Հետաձգված վերապահովագրության միջնորդավճարներ եկամտի ճանաչում	175,391 (164,611)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	95,341

21. Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Վճարվելիք գումարներ	42,360	197,642
Պարտավորություններ հարկերի գծով` բացառությամբ շահութահարկի	71,710	32,835
Ավտոմատացված վճարումների բյուրոյին վճարվելիք գումարներ	28,171	29,206
Այլ վճարվելիք գումարներ	19,515	24,905
	161,756	284,588
Ակտիվներին վերաբերող շնորհներ	4,377	0
Այլ պահուստներ	77,375	55,624
Ընդամենը այլ պարտավորություններ	243,508	340,212

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	0	0
Աճ/(նվազում)	17,509	
Եկամտի ճանաչում	-13,132	
Մնացորդը դեկտեմբերի 1-ի դրությամբ	4,377	0

22. Ապահովագրավճարներ

2013

Հազար ՀՀ դրամ	Համախառն ապահովա- գրավճարներ	Փոփոխություն չվաստակած ապահովա- գրավճարների համախառն պահուստում	Համախառն ապահովա- գրավճարների զօնով հասույթ	Վերաապա- հովագրողներին փոխանցված ապահովագրա- վճարներ	Վերաապա- հովագրողների մասը չվաստակած ապահովա- գրավճարների համախառն պահուստի փոփոխությունում	Փոխանցված վաստակած ապահովա- գրավճարներ	Ապահովա- գրավճար-ների զօնով զուտ հասույթ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	184,526	(4,140)	180,386	(21,560)	1,646	(19,914)	160,472
Առողջության ապահովագրություն	2,123,393	218,299	2,341,692	-	-	-	2,341,692
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	409,205	19,657	428,862	(93,250)	6,279	(86,971)	341,891
Օդանավերի ապահովագրություն	38,000	(2,276)	35,724	(25,012)	1,436	(23,576)	12,148
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	184,176	(3,320)	180,856	(116,548)	1,843	(114,705)	66,151
Հրդեհից, բնական աղետներից և գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	963,635	7,352	970,987	(696,634)	(49,809)	(746,443)	224,544
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	16,615	186	16,801	(11,410)	290	(11,120)	5,681
Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	14,800	(1,313)	13,487	(8,494)	775	(7,719)	5,768
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	135,797	9,398	145,195	(91,925)	(8,728)	(100,653)	44,542
Երաշխիքի տրամադրում	-	163	163	-	-	-	163
Ֆինանսական վնասների ապահովագրություն	52,444	(8,885)	43,559	(48,082)	7,577	(40,505)	3,054
Աջակցության ապահովագրություն	197,823	(12,313)	185,510	(39,270)	11,759	(27,511)	157,999
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	3,288,055	(402,162)	2,885,893	-	-	-	2,885,893
							-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,608,469	(179,354)	7,429,115	(1,152,185)	(26,932)	(1,179,117)	6,249,998

Հազար ՀՀ դրամ	Համախառն ապահովա- գրավճարներ	Փոփոխություն չվաստակած ապահովա- գրավճարների համախառն պահուստում	Համախառն ապահովա- գրավճարների գծով հասույթ	Վերաապա- հովագրողների փոխանցված ապահովա- գրավճարներ	Վերաապահո- վագրողների նասը չվաստակած ապահովա- գրավճարների համախառն պահուստի փոփոխությունում	Փոխանցված վաստակած ապահովա- գրավճարներ	Ապահովա- գրավճար-ների գծով զուտ հասույթ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	179,859	(7,573)	172,286	(16,751)	2,317	(14,434)	157,852
Առողջության ապահովագրություն	3,113,064	(907,914)	2,205,150	-	-	-	2,205,150
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	522,904	(42,586)	480,318	(108,467)	13,246	(95,221)	385,097
Օդանավերի ապահովագրություն	3,000	16,137	19,137	(2,529)	(10,120)	(12,649)	6,488
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	172,965	(8,754)	164,211	(104,146)	5,396	(98,750)	65,461
Հրդեհից, բնական աղետներից և գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	1,461,079	(545,082)	915,997	(1,169,444)	509,158	(660,286)	255,711
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	20,520	864	21,384	(10,006)	(508)	(10,514)	10,870
Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	0	6,797	6,797	-	(3,671)	(3,671)	3,126
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	171,645	(43,334)	128,311	(125,940)	38,848	(87,092)	41,219
Երաշխիքի տրամադրում	0	209	209	-	-	-	209
Ֆինանսական վնասների ապահովագրություն	34,790	(3,780)	31,010	(32,118)	3,116	(29,002)	2,008
Աջակցության ապահովագրություն	197,615	(24,832)	172,783	(38,899)	17,787	(21,112)	151,671
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	3,153,812	(256,980)	2,896,832	-	-	-	2,896,832
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,031,253	(1,816,828)	7,214,425	(1,608,300)	575,569	(1,032,731)	6,181,694

23. Վերաապահովագրության միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31			2012 դեկտեմբերի 31		
	Վերաապահ- ովագրության միջնորդավճար	Վերաապահ- ովագրության միջնորդա- վճարների վերադարձ դադարեցումների գծով	Զուտ վերաապա- հովագրության միջնորդավճար	Վերաապահ- ովագրության միջնորդավճար	Վերաապահ- ովագրության միջնորդա- վճարների վերադարձ դադարեցումների գծով	Զուտ վերաապա- հովագրության միջնորդավճար
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	3,361	(57)	3,304	2,619	(126)	2,493
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	23,633	(1,720)	21,913	20,256	(3,704)	16,552
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	19,427	(9)	19,418	13,299	(15)	13,284
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	105,427	(3,345)	102,082	57,731	(1,962)	55,769
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	2,840	(53)	2,787	2,501	(117)	2,384
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	10,012	(554)	9,458	6,207	(105)	6,102
Ֆինանսական վնասների ապահովագրություն	5,177	-	5,177	2,574	-	2,574
Աջակցության ապահովագրություն	472	-	472	89	-	89
Ընդամենը	170,349	(5,738)	164,611	105,276	(6,029)	99,247

24. Ներդրումային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից տոկոսային եկամուտ	155,547	172,500
Վաճառքի համար մատչելի արժեթղթերից տոկոսային եկամուտ	470,385	389,652
Այլ ներդրումային եկամուտ	515	10,211
Ընդամենը ներդրումային եկամուտ	626,447	572,363

25. Ապահովագրական հատուցումներ

2013 դեկտեմբերի 31

Հազար ՀՀ դրամ	Դժբախտ պատահարներ	Առողջություն	Ցամաքային տրանսպորտ	Փոխադրվող գույք (բեռներ)	Հրդեհ և բնական աղետներ	Ցամաքային տրանսպորտի օգտագործումից բխող պատասխանատվություն	Ընդհանուր պատասխանատվություն	Ֆինանսական վնասների	Աջակցություն	ԱՊՊԱ	Ընդամենը
Ընթացիկ տարվա հատուցումներ	21,390	1,341,548	228,677	2,666	45,387	255	185	19,016	29,097	2,135,989	3,824,210
Փոփոխություն տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում	51	29,208	(7,487)	38	1,610	(98)	16,230	1,238	(5,216)	(953)	34,621
Փոփոխություն ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում	1,800	113,281	(24,482)	(127)	12,589	(1,910)	9,336	5,754	(12,244)	25,731	129,728
Ապահովագրական հատուցումներ	23,241	1,484,037	196,708	2,577	59,586	(1,753)	25,751	26,008	11,637	2,160,767	3,988,559
Ընթացիկ տարվա հատուցումներում վերապահովագրողի մաս	-	-	(58,049)	(2,399)	(31,870)	(204)	(94)	(19,016)	(1,259)	-	(112,891)
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում վերապահովագրողի մասի փոփոխություն	-	-	2,809	(40)	1,233	129	(8,057)	(1,217)	(1,918)	-	(7,061)
Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում վերապահովագրողի մասի փոփոխություն	-	-	34,122	26	(9,793)	2,625	(5,387)	(5,325)	-	-	16,268
Ապահովագրական հատուցումներում վերապահովագրողի մաս	-	-	(21,118)	(2,413)	(40,430)	2,550	(13,538)	(25,558)	(3,177)	-	(103,684)
Զուտ ապահովագրական հատուցումներ	23,241	1,484,037	175,590	164	19,156	797	12,213	450	8,460	2,160,767	3,884,875

2012 դեկտեմբերի 31

Հազար ՀՀ դրամ	Դժբախտ պատահարներ	Առողջություն	Ցամաքային տրանսպորտ	Փոխադրվող գույք (բեռներ)	Հրդեհ և բնական աղետներ	Ցամաքային տրանսպորտի օգտագործումից բխող պատասխանատվություն	Ընդհանուր պատասխանատվություն	Ֆինանսական վնասների	Աջակցություն	ԱՊՊԱ	Ընդամենը
Ընթացիկ տարվա հատուցումներ	18,844	839,157	277,916	1,308	94,188	311	1,499	-	63,899	2,134,597	3,431,719
Փոփոխություն տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում	2,383	29,417	6,492	(653)	(6,051)	(190)	(3,419)	884	7,127	59,580	95,570
Փոփոխություն ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում	175	20,680	(1,492)	(12,744)	(120,893)	-	-	18,815	6,947	48,793	(39,719)
Ապահովագրական հատուցումներ	21,402	889,254	282,916	(12,089)	(32,756)	121	(1,920)	19,699	77,973	2,242,970	3,487,570
Ընթացիկ տարվա հատուցումներում վերապահովագրողի մաս	-	-	(45,109)	(1,177)	(96,164)	(163)	(863)	-	(397)	-	(143,873)
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում վերապահովագրողի մասի փոփոխություն	80	-	782	597	4,311	116	281	(941)	2,754	-	7,980
Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում վերապահովագրողի մասի փոփոխություն	-	-	(12,121)	11,723	114,153	-	-	(18,815)	201	-	95,141
Ապահովագրական հատուցումներում վերապահովագրողի մաս	80	-	(56,448)	11,143	22,300	(47)	(582)	(19,756)	2,559	-	(40,752)
Զուտ ապահովագրական հատուցումներ	21,482	889,254	226,468	(946)	(10,456)	74	(2,502)	(57)	80,532	2,242,970	3,446,818

26. Ձեռքբերման ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Միջնորդավճարներ գործակալներին		
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	48,456	48,649
Առողջության ապահովագրություն	392,542	507,589
Ցանաքային տրանսպորտի ապահովագրություն	84,456	66,083
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	149,961	103,762
Աջակցության ապահովագրություն	54,884	50,373
ԱՊՊԱ	396,452	377,894
Այլ	44,016	42,190
	1,170,767	1,196,540
Միջնորդավճարներ բրոքերներին		
Ցանաքային տրանսպորտի ապահովագրություն	12,797	13,217
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	7,818	10,639
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	40,521	27,609
Ցանաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կանավոր ապահովագրություն	1,643	1,917
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	5,496	4,569
Այլ	2,828	1,952
	71,103	59,903
Բժշկական ստուգման և այլ ձեռքբերման ծախսեր	85,002	33,450
Ընդամենը ձեռքբերման ծախսեր	1,326,872	1,289,893

27. Ֆինանսական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերով վարկերից	295,040	264,396
Տոկոսային ծախսեր բանկերից ստացված վարկերից	43,673	3,099
Շուկայականից ցածր տոկոսադրույքով տրամադրված վարկերի զեղչումից ֆինանսական ծախսեր	-	-
Ընդամենը ֆինանսական ծախսեր	338,713	267,495

28. Այլ ակտիվների և դեբիտորական պարտքերի արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Այլ ակտիվներ (ծանոթ. 8, 11)	1,841	4,322
Ապրիավագրության գծով դեբիտորական պարտքեր (ծանոթ. 10)	16,581	27,183
Այլ անձանց տրամադրված փոխառություններ (ծանոթ. 11)	1,781	-
Այլ ակտիվների և դեբիտորական պարտքերի արժեզրկման ծախս	20,203	31,505

29. Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Աշխատավարձ և այլ վճարներ	957,056	762,638
Սոցիալական ապահովագրության վճարներ*	0	72,659
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	957,056	835,297

*2013թ. հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների արդյունքում գործառնության մեջ է դրվել մեկ միասնական եկամտային հարկ, որ միավորում է եկամտահարկը, աշխատողի սոցիալական ապահովության վճարը և գործատուի կողմից վճարվող սոցիալական ապահովության վճարը:

30. Այլ գործառնական և վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների պահպանման ծախսեր	45,675	49,947
Գովազդի ծախսեր	81,162	102,432
Գործունեության ծախսեր	13,798	12,742
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	42,022	47,497
Վարձակալության գծով ծախսեր	134,339	126,575
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	21,730	14,236
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	69,788	49,272

Անվտանգության գծով ծախսեր	4,811	-
Ներկայացուցչական ծախսեր	3,762	19,008
Բանկային ծախսեր	3,683	28,468
Գրասենյակային ծախսեր	65,633	78,699
Տույժեր ու տուգանքներ	3,135	3,405
Հիմնական միջոցների վաճառքից ծախս	6,974	0
Անդամավճարներ	3,950	3,550
Վճարներ Հայաստանի Ավտոապագովագրողների Բյուրոյին	109,186	98,404
Անհատույց տրված ակտիվներ	13,238	87,977
Այլ ծախսեր	36,827	16,729
Ընդամենը այլ գործառնական և վարչական ծախսեր	659,713	738,941

31. Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Ընթացիկ հարկ	25,395	-
Հետաձգված հարկ	51,830	32,600
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	77,225	32,600

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույթաչափը կազմում է 20% (2012թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույթաչափը կիրառելով:

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2012	Ֆինանսական արդյունքներով ծանաչված	Այլ համապարփակ եկամտում ծանաչված	2013 դեկտեմբերի 31
Այլ պարտավորություններ	11,120	4,531	-	15,651
Ապահովագրական հատուցումներ	-	6,515	-	6,515
Վարձակալված հիմնական միջոցներում կապիտալ ներդրումներ	2,503	(661)	-	1,842
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	-	329	-	329
Այլ անձանց տրամադրված փոխառություններ	-	-	-	-
Կուտակված հարկային վճար	7,000	(7,000)	-	-
Վերապահ-ներից ստացմ. ենթակա միջնորդավճարների գծով դեբ.պարտքեր	-	19,068	-	19,068
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	20,623	22,783	-	43,406
Հիմնական միջոցներ	(8,553)	(3,360)	(4,411)	(16,324)
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(23,822)	-	(67,780)	(91,602)
Այլ ակտիվներ	(436)	(3)	-	(439)
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	(3,345)	1,400	-	(1,945)
Պարտավորություններ ֆինանսական հաստատություններին	(3,369)	265	-	(3,104)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(245)	(13)	-	(258)
Այլ ապահովագրական պահուստներ	(46,221)	31,006	-	(15,215)
Գործակալական միջնորդավճարների գծով կր.պարտքեր	-	(105,859)	-	(105,859)
Այլ պահուստներ	(1,950)	1,950	-	-
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(87,941)	(74,615)	(72,191)	(234,746)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(67,318)	(51,832)	(72,191)	(191,340)

32. Արտահաշվեկշռային հաշիվներ

Հազար ՀՀ դրամ	2013 դեկտեմբերի 31	2012 դեկտեմբերի 31
Անշարժ գույք և այլ հիմնական միջոցներ	32,586	-
ՀՀ պետական արժեթղթեր	3,825,577	2,112,213
Այլ արժեթղթեր	160,000	-
Դրամական միջոցներ	4,106	117,257
Անշարժ գույք և այլ հիմնական միջոցներ	-	772,737
Գործառնական վարձակալությամբ օգտագործվող շենքեր	89,639	110,153
Գործառնական վարձակալությամբ օգտագործվող փոխադրամիջոցներ և այլ հիմնական միջոցներ	3,600	3,600
Ստացված երաշխիքներ	4,950	13,069
Այլ պայմանական պարտավորություններ	-	975,000
Ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ	2,076,449,761	2,326,959,700
Վերապահավորության պայմանագրերի գծով վերապահավորական գումարներ	1,026,811,222	939,148,535
Այլ արտահաշվեկշռային հոդվածներ	114,690	83,574
Ընդամենը	3,107,496,131	3,270,295,838

"Ինվեստ պոլիս" ՍՊԸ ուղղակի նշանակալից մասնակից անձի փոխկապակցված անձինք՝

1. Տատյանա Յուրևնա Կայգարոդովա
2. Ինգոսստրախ Ապահովագրական ԲԲԸ
3. Ստրախովայա կոմպանիա "Ինգոսստրախ-Մ" ՍՊԸ
4. ԷՄԷՍԿ Բժշկական Ապահովագրական ԲԲԸ
5. Վլինիկա ԼՄՍ ՍՊԸ
6. ՏԻՄ Ասսիստանս ՍՊԸ
7. Ստրախովայա կոմպանիա "Ինգոսստրախ-Ժիզն" ՍՊԸ
8. Ինգոսստրախ-ՍեդՅենտր ՓԲԸ
9. Ինգոսստրախ-ինվեստիցիի Կառավարող ընկերություն ԲԲԸ
10. Չրեզվիչայնայա ստրախովայա կոմպանիա ԲԲԸ
11. ԲելՊոլիս-Ինվեստ ՍՊԸ
12. Ալցիոներնայա ստրախովայա կոմպանիա "ԻՆՉՈՒ Ուկրաինա" ՓԲԸ
13. ԻՆՉՈՒ Արմենիա Ապահովագրական ՓԲԸ
14. Գարանտ Ապահովագրական բաժնետիրական ընկերություն
15. "ԿԻՐԳԻՉԻՆՍՏՐԱՆՍ" Ապահովագրական դրոգա-ռուսական համատեղ ՓԲԸ արտասահմանյան ապահովագրության գծով
16. Ինժեներնի Կոնսալտինգովի Ցենտր Պրոմտեխգաշխտ ՍՊԸ

"Ինգոսստրախ" ԲԲԸ անուղղակի նշանակալից անձի փոխկապակցված անձինք՝

1. Օլեգ Սամուելովիչ Վիխանսկի
2. Սերգեյ Ալեքսանդրովիչ Պրոտոկլիտով
3. Ալեքսանդր Վալերիիչ Գրիգորև
4. Իրինա Ռադամիրովա Գարինա
5. Սվետլանա Վլադիմիրովնա Վորոպանա
6. Վյաչեսլավ Իվանովիչ Չերբակով
7. Բորիս Գրիգորևիչ Ֆեոդորով
8. Սերգեյ Ալեքսանդրովիչ Պրոտոկլիտով
9. Օլգա Նիկոլևնա Ջինովևա
10. Ալեքսանդր Պավլովիչ Դոկո
11. Միխայիլ Վյաչեսլավովիչ Կուչին
12. Իգոր Սերգեևիչ Յամով
13. Կոնստանտին Բորիսովիչ Սոկոլով
14. Ալեքսեյ Անատոլևիչ Սոկոլով
15. Նիկոլայ Վլադիմիրովիչ Գալուշին
16. "ՍՈՖԱԳ" Ապահովագրական բաժնետիրական ընկերություն
17. "ԻնգոՆորդ" Ապահովագրական բաժնետիրական ընկերություն
18. "Կիրգիզինստրախ" Ապահովագրական ՓԲԸ
19. "Բելինգոստրախ" Ապահովագրական ՓԲԸ
20. "Նուրէլես" դրոգա-ռուսական համատեղ ՍՊԸ
21. "Ինվեստ-Պոլիս" ՍՊԸ
22. Ալցիոներնայա ստրախովայա կոմպանիա "ԻՆՉՈՒ Ուկրաինա Ժիզն" ՓԲԸ

Լևոն Ալթունյան ֆիզիկական անձ ուղղակի նշանակալից մասնակցի փոխկապակցված անձինք՝

1. Նատալյա Ալթունյան
2. Նորայր Ալթունյան
3. Մերի Ալթունյան
4. Մարիա Ալթունյան
5. Դիանա Այդինյան

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն՝ **Լևոն Ալթունյան**
Գլխավոր հաշվապահ՝ **Ալվինա Բալբաբյան**